ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք. Երևան «18» 12 2018թ № 1119-Ա

«ՇԻՆՍԵՐՏԻՖԻԿԱՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ ՉԵՂՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի № 623-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ և 33-րդ կետերը, շինարարական ոլորտի հավատարմագրման տեխնիկական կոմիտեի 2018 թվականի սեպտեմբերի 17-ի № 8/2 որոշումը և «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի 2018 թվականի դեկտեմբերի 13-ի զեկուցագիրը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Շինսերտիֆիկատ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության արտադրանքի սերտիֆիկացման մարմնի նշանակումը չեղյալ հայտարարել 2018 թվականի հոկտեմբերի 3-ից:
2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով՝ այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետում:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Ա. Բաբայանին:

ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ